ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

0009, ք.Երևան, Կորյունի 17, Հեռ. (00374 10) 583-734

N - Ա-3543

«11» մայիսի 2021թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ
ՊԱՐՈՆ ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆԻՆ

Մեծարգո՛ պարոն Վարչապետ

«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 89-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի համաձայն՝ *Բարձրագույն դատական խորհուրդը Կառավարության համաձայնությամբ ավելացնում է առանձին դատարանների դատավորների թվակազմը, կրճատում է իր կողմից ավելացված դատավորների թվակազմը:*

Հաշվի առնելով հարցի լուծման կարևորությունն ու հրատապությունը, խնդրում եմ ՀՀ կառավարության համաձայնությունը՝ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական, ՀՀ վերաքննիչ քրեական, ՀՀ վերաքննիչ վարչական և ՀՀ սնանկության դատարանների դատավորների թվակազմն ավելացնելու գործընթացը սկսելու վերաբերյալ:

Կից ներկայացվում են վերը նշված դատարանների դատավորների թվակազմն ավելացնելու կապակցությամբ իրականացված ուսումնասիրության արդյունքում կազմված իրավական հիմնավորումներն ու ֆինանսական հնարավոր ծախսերի հետ կապված հաշվարկները:

Առդիր՝ 20 էջ:

Հարգանքով
Պաշտոնակատար՝ **Գ. ՋՀԱՆԳԻՐՅԱՆ**

ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺԻՆ
Մուտք թիվ 037.6/28497
«12» 05 2021 թ.

ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐ

ՀՀ վերաքննիչ դատարաններում և ՀՀ սնանկության դատարանում փվյալ դատարանին համապատասխան մասնագիտացումներով դատավորների թվաքանակի ավելացման վերաբերյալ

Դատական պաշտպանության իրավունքը բացահայտող ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և **ողջամիտ ժամկետում** քննության իրավունք:

Հարկ է փաստել, որ ցանկացած իրավական պետության համար էական նշանակություն ունի անձանց դատական պաշտպանության իրավունքի իրացման համար արդյունավետ կառուցակարգերի առկայությունը:

Միաժամանակ, պետք է նշել, որ արդար դատաքննության իրավունքն իր ամրագրումն է ստացել նաև միջազգային-իրավական փաստաթղթերում: Մասնավորապես, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները կամ նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք: (...):

Վերոգրյալ իրավակարգավորումներից բխում է, որ արդար դատաքննության իրավունքի կարևոր բաղադրիչ է հանդիսանում ողջամիտ ժամկետներում գործերի քննության հնարավորության ապահովումը՝ դրանով իսկ շահագրգիռ անձանց պաշտպանելով երկարատև «անորոշ» վիճակից:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանն անդրադառնալով «Ողջամիտ ժամկետ» հասկացության բովանդակության բացահայտմանը, իր նախադեպերից մեկում նշել է, որ «Կոնվենցիան նշանակություն է տալիս այն հանգամանքին, որ արդարադատությունը չպետք է իրականացվի այնպիսի ընդհատումներով, որոնք կարող են վարկաբեկել դրա արդյունավետությունն ու ճշմարտացիությունը:»:

Ողջամիտ ժամկետներն, ըստ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավակիրառ պրակտիկայի, հաշվարկվում են՝ հաշվի առնելով մի շարք հանգամանքներ, ինչպիսիք են՝ գործի բարդությունը, դիմումատուի վարքագիծը և հետապնդած շահը, դատական և պետական իշխանության մարմինների վարքագիծը:

ՀՀ սահմանադրական դատարանն իր 2013թ. փետրվարի 5-ի թիվ ՍԴՈ-1074 որոշմամբ տվել է իրավական դիրքորոշում առ այն, որ «ողջամիտ ժամկետ» եզրույթը չի բացառում տարբեր գործոններով պայմանավորված՝ գործի դատական քննության ընթացքը դանդաղեցնող օբյեկտիվ հանգամանքների հնարավոր առկայությունը և դրանով պայմանավորված՝ նախնական դատական նիստերի, գործի քննությունը

վերսկսելու, գործի քննությունը հետաձգելու, գործի վարույթը կասեցնելու ինստիտուտների անհրաժեշտությունը: **Դա միաժամանակ ենթադրում է դատարանի կողմից գործի քննությունն անհարկի, կամայականորեն ձգձգելը բացառելու պատվիրան:**

ՀՀ վճռաբեկ դատարանն իր 23.12.2010թ. թիվ ԳԴ1/0012/13/09 որոշմամբ արձանագրել է, որ *դատավարական ժամկետների պահպանումը կարևոր նշանակություն ունի դատավարության տևողության ողջամտության ապահովման համար, իսկ ողջամիտ ժամկետում դատաքննության իրավունքը Մարդու իրավունքների միջազգային իրավունքի հիմնարար սկզբունքներից է: Այն ամրագրված է Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Եվրոպական կոնվենցիայում (6-րդ հոդված) և Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրում (9-րդ հոդված):*

Ներպետական օրենսդրական կարգավորումները նույնպես անդրադառնում են ողջամիտ ժամկետների հարցին, մասնավորապես, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 9-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի համաձայն՝ դատարանում գործի քննության տևողության ողջամտությունը որոշելիս, ի թիվս այլնի, հաշվի է առնվում գործի քննության **ընդհանուր տևողությունը:**

Վերոգրյալից բխում է, որ գործի քննության ընդհանուր տևողությունն իր մեջ ներառում է վերաքննիչ և վճռաբեկ դատական ատյաններում բողոքների քննության ժամանակահատվածը ևս:

Ելնելով միջազգային և ներպետական իրավական կարգավորումների ընդհանուր տրամաբանությունից՝ հարկ է արձանագրել, որ գործերի քննության ողջամիտ ժամկետի երաշխավորումն առաջին հերթին կանխորոշվում է դատարանակազմական և դատավարական լիարժեք կառուցակարգերով և դրանց պատշաճ գործադրմամբ, ինչն իր հերթին փոխպայմանավորված է մի շարք ինստիտուցիոնալ և ֆունկցիոնալ գործոններով, մասնավորապես, դատարանների ծանրաբեռնվածության համաչափությունը, դատավարությանը մասնակցող անձանց պատշաճ վարքագիծը, դատավարական ժամկետների սահմանումը, ապացույցներ հետազոտելու անհրաժեշտությունը և այլն:

Ակնհայտ է, որ գոյություն ունեն ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունքի խախտմանը նպաստող տարբեր հանգամանքներ: Այնուամենայնիվ, այսօր, մեր դատական համակարգում որոշ մասնագիտացմամբ գործերի քննության ընթացքում ողջամիտ ժամկետների խախտումները պայմանավորված են հենց դատավորների գերծանրաբեռնվածության և, հետևաբար, առանձին դատարանների դատավորների ոչ բավարար թվաքանակի հանգամանքով: Այդպիսի հետևության գալու համար որպես ելակետային տվյալներ են հանդիսացել ինչպես Դատական դեպարտամենտի կողմից վարվող վիճակագրությունն ու նրա տվյալները, այնպես էլ հասարակության մեջ եղած դժգոհություններն ու Բարձրագույն դատական խորհրդին

հաճախ հասցեագրված դիմում-բողոքների բովանդակությունը:

Վերոգրյալ իրավակարգավորումների համատեքստում, հաշվի առնելով որոշ մասնագիտացմամբ գործերի քննության ողջամիտ ժամկետների վերաբերյալ առկա իրողությունը, Բարձրագույն դատական խորհուրդը, ղեկավարվելով Օրենսգրքի 89-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով սահմանված կանոնի պահանջներով, դիմում է Կառավարությանն՝ ակնկալելով վերջինիս համաձայնությունը առանձին դատարանների դատավորների թվակազմն ավելացնելու հարցում՝ հետևյալ հիմնավորումներով.

1. Վերաքննիչ դատարանները՝ որպես «վերադաս» և դատական ակտերի վերանայումն իրականացնող դատական ատյաններ, բացառիկ կարևոր դերակատարություն ունեն իրավունքի գերակայության երաշխավորման, իրավական որոշակիության ապահովման, իրավունքների սահմանափակման սահմանադրական չափորոշիչների իրացման և դատական իշխանության որակական զարգացումների ուղղորդող դերակատարությունների հարցում:

Իհարկե, կարևոր է այն հանգամանքը, թե ինչպիսին է դատական երկրորդ օղակի՝ վերաքննիչ դատարանների գործունեության ընդհանուր համակարգի արդյունավետությունն ու կենսունակությունը: Վիճակագրական թվերի համեմատական տվյալների ամբողջացման լույսի ներքո կարող ենք փաստել, որ վերաքննիչ դատարանների գործերի դինամիկ աճն այսօր դատական համակարգի ծանրագույն խնդիրներից մեկն է, քանի որ դատարանների ծանրաբեռնվածության աճի միտումը գնալով շարունակվում է: Այսպես.

1.1. ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանում ներկայումս գործում է 5 դատական կազմ (դատարանի նախագահ և 15 դատավոր), որն Օրենսգրքի 28-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով տվյալ դատարանի համար սահմանված դատավորների թվակազմի նվազագույն շեմն է: Եթե դիտարկենք ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի վերջին 2 տարիների գործունեության վիճակագրական տվյալները, ապա պատկերը հետևյալն է.

2019 թվականի ընթացքում ստացվել է 6360 վերաքննիչ բողոք, ընդ որում, 2018 թվականից փոխանցվել է 808 անավարտ գործ, ընդհանուր առմամբ՝ 7168 գործ, որից ավարտվել է 6674 գործ, անավարտ է մնացել՝ 494 գործ:

2020 թվականի ընթացքում ստացվել է 6417 վերաքննիչ բողոք, ընդ որում, 2019 թվականից փոխանցվել է 790 անավարտ գործ, ընդհանուր առմամբ՝ 7207 գործ, որից ավարտվել է 6651 գործ, անավարտ է մնացել՝ 556 գործ:

1.2. ՀՀ վերաքննիչ քրեական դատարանում ներկայումս գործում է 6 դատական կազմ (դատարանի նախագահ և 17 դատավոր), որն Օրենսգրքի 28-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով տվյալ դատարանի համար սահմանված դատավորների թվակազմի նվազագույն շեմն է: Տվյալ դատարանի դեպքում ևս՝ վիճակագրական տվյալների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ առկա դատավորների թվակազմի ծանրաբեռնվածությունը խոչնդոտում է բողոքների քննությունը ողջամիտ

ժամկետներում իրականացնելուն: Մասնավորապես.

2019 թվականի ընթացքում ստացվել է 4034 վերաքննիչ բողոք, ընդ որում, 2018 թվականից փոխանցվել է 502 անավարտ գործ, ընդհանուր առմամբ՝ 4545 գործ, որից ավարտվել է 4057 գործ, անավարտ է մնացել՝ 488 գործ:

2020 թվականի ընթացքում ստացվել է 4439 վերաքննիչ բողոք, ընդ որում, 2019 թվականից փոխանցվել է 488 անավարտ գործ, ընդհանուր առմամբ՝ 4927 գործ, որից ավարտվել է 4308 գործ, անավարտ է մնացել՝ 619 գործ:

Բնականաբար, վերաքննիչ դատարանների արդյունավետությունը չի սահմանափակվում միայն նշված քանակական ցուցանիշներով և իրենց շրջագծով: Մասնավորապես, ՀՀ վերաքննիչ քրեական դատարանում գործի քննության ձգձգումները՝ ելնելով դատարանի ծանրաբեռնվածության և դատական նիստերը ժամանակին նշանակելու խնդիրներից, կարող են հանգեցնել նաև մարդու ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունքների սահմանափակման իրավաչափության երաշխիքները կանոնակարգող իրավադրույթների խախտման:

1.3. ՀՀ վերաքննիչ վարչական դատարանում ներկայումս գործում է 3 դատական կազմ (դատարանի նախագահ և 9 դատավոր), որը Օրենսգրքի 28-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով տվյալ դատարանի համար սահմանված դատավորների թվակազմի նվազագույն շեմն է: Ընդ որում, դատարանի նախագահը քննում է միայն միջանկյալ դատական ակտերի դեմ ներկայացված բողոքներով գործեր՝ մյուս դատավորների համեմատ 25 տոկոսով պակաս:

ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի վերջին 2 տարիների գործունեության վիճակագրական տվյալների մասով պատկերը հետևյալն է.

2019 թվականի ընթացքում ստացվել է 4005 վերաքննիչ բողոք, ընդ որում, 2018 թվականից փոխանցվել է 2780 անավարտ գործ, ընդհանուր առմամբ՝ 6785 գործ, որից ավարտվել է 3456 գործ, անավարտ է մնացել՝ 3329 գործ:

2020 թվականի ընթացքում ստացվել է 2988 վերաքննիչ բողոք, ընդ որում, 2019 թվականից փոխանցվել է 3329 անավարտ գործ, ընդհանուր առմամբ՝ 6317 գործ, որից ավարտվել է 3408 գործ, անավարտ է մնացել՝ 2909 գործ:

Վերաքննության կարգով բողոքարկվող գործերի քանակական, ինչպես նաև անավարտ գործերի տարեկան աստիճանական աճի պայմաններում շարունակում է անփոփոխ մնալ դատավորների թվաքանակը, ինչը չի կարող ողջամիտ համարվել: Գործերի քանակի ավելացմանը զուգահեռ, հարկ է նշել այն անհամաչափության մասին, որ ստորադաս՝ Վարչական դատարանում գործող 24 դատավորների կողմից կայացված վճիռների և միջանկյալ ակտերի դեմ ներկայացված բողոքները Վերաքննիչ դատարանում քննության են առնվում ընդամենը 3 դատական կազմերի կողմից, ինչն ահռելի մեծ ծանրաբեռնվածության է հանգեցնում: Պրակտիկայի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ բողոքարկման առարկա է դառնում գործն ըստ էության լուծող դատական ակտերի 40 տոկոսից ավելին:

Միաժամանակ, հարկ է նշել, որ ՀՀ վերաքննիչ վարչական դատարանում գործի

վերաքննությունն իրականացվում է «ex officio» սկզբունքի հիման վրա, որից հետևում է, որ ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի վրա դրված է պարտականություն՝ գործի ամբողջական քննություն իրականացնել: Նշված պարտականությունը լրացուցիչ ծանրաբեռնվածություն է ստեղծում, քանի որ շատ հաճախ նշված սկզբունքով պայմանավորված դատական գործի քննությունը հետաձգվում է այս կամ այն ապացույցը ձեռք բերելու համար: Հարկ ենք համարում ուշադրություն դարձնել նաև այն հանգամանքին, որ գործերի քանակի ավելացմանը զուգահեռ՝ բազմաբովանդակ է դարձել նաև բողոքարկվող դատական ակտերի տեսակները: Եթե նախկինում հիմնական մաս էին կազմում ՀՀ ոստիկանության ճանապարհային ոստիկանության կողմից կայացված վարչական ակտերի բողոքարկումները, ապա այժմ գործերի բնույթը բազմաժանր է և անհրաժեշտություն է առաջանում գրեթե յուրաքանչյուր գործ հատուկ ուսումնասիրության և հետազոտության ենթարկել, որը պահանջում է մարդկային և ժամանակային բավականին մեծ ռեսուրսներ:

Բողոքների քանակի ավելացմամբ և դատավորների գերծանրաբեռնվածությամբ պայմանավորված՝ այս իրավիճակն անլուծելի խնդիր է առաջ բերել դատական նիստերի նշանակման հարցում, քանի որ գործերի քանակի աճով պայմանավորված էական խնդիր է հանդիսանում դատական նիստերը ժամանակին նշանակելու հարցը, հատկապես նկատի ունենալով այն հանգամանքը, որ դատական նիստերն արդեն իսկ նշանակված են 2022 թվականի օգոստոս-սեպտեմբեր ամիսներին: Ստացվում է, որ շահագրգիռ անձն այս պահին վերաքննիչ բողոք ներկայացնելուց արդեն իսկ պետք է ակնկալի, որ իր գործով դատական նիստ նշանակվելու է շուրջ 1,5-2 տարի անց, ինչը ոչ միայն անթույլատրելի է, այլև մտահոգիչ՝ վերը նկարագրված իրողությունների պայմաններում:

2. ՀՀ սնանկության դատարանը, որպես մասնագիտացված դատարան, 2019 թվականի հունվարի 1-ից գործում է՝ 12 դատավորի թվակազմով: Մինչև, որպես մասնագիտացված դատարան, ՀՀ սնանկության դատարանի գործելը սնանկության գործեր քննում էին ընդհանուր առմամբ 17 քաղաքացիական մասնագիտացմամբ դատավորներ՝ հաշվի առնելով Բարձրագույն դատական խորհրդի 09.07.2018թ. թիվ ԲԴԽ-23-Ն-1 որոշումը:

Սնանկության դատարանի տարեկան գործունեության վիճակագրական տվյալների ամփոփման արդյունքում նկատվում է գործերի քանակի զգալի աճ՝ թե՛ նախորդ տարվանից փոխանցվող գործերի թվով, և թե՛ ստացվող գործերի թվով պայմանավորված:

2017-2018 թվականների վիճակագրական տվյալների ուսումնասիրությունը վկայում է, որ 17 դատավորների թվակազմով յուրաքանչյուր դատավորի ծանրաբեռնվածությունը 2017 թվականին միջինում կազմել է 544 սնանկության գործ, իսկ 2018 թվականին՝ 548 սնանկության գործ: Միաժամանակ, 2017 թվականի ընթացքում յուրաքանչյուր դատավորի հաշվարկով միջինում ավարտվել են թվով 114 սնանկության գործ, իսկ 2018 թվականին՝ թվով 124 սնանկության գործ:

2019 թվականի վիճակագրական տվյալների ուսումնասիրությունը վկայում է, որ 12 դատավորների թվաքանակով ՀՀ սնանկության դատարանի յուրաքանչյուր դատավորի ծանրաբեռնվածությունը 2019 թվականին միջինում կազմել է 765 սնանկության գործ, որոնցից նույն ժամանակահատվածում յուրաքանչյուր դատավորի հաշվարկով միջինում ավարտվել են թվով 193 սնանկության գործ: Ընդ որում, առանձնակի ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ 2019 թվականին, բացի սնանկության վերոնշյալ թվային արտահայտմամբ գործերի, ՀՀ սնանկության դատարանում ստացվել են նաև թվով 446 քաղաքացիական գործ, որոնցից նույն ժամանակահատվածում ավարտվել են թվով 259 քաղաքացիական գործ, իսկ 2020 թվականին ստացվել է 575 քաղաքացիական գործ, որոնցից նույն ժամանակահատվածում ավարտվել են թվով 337 քաղաքացիական գործ:

Վերոնշյալ վիճակագրական տվյալների համատեքստում անհրաժեշտ ենք համարում ներկայացնել նաև 2019 և 2020 թվականների ընթացքում ՀՀ սնանկության դատարանում ստացված սնանկության գործերի թվաքանակի աճի դինամիկան (Աղյուսակ 1):

Աղյուսակ 1

2019թ. ընթացքում ընդհանուր սնանկության գործերի քանակը **9185** գործ ***(6846-ը փոխանցված 2018թ., իսկ ստացված 2339-ը)***		**2020թ. ընթացքում** ընդհանուր սնանկության գործերի քանակը **10093** գործ ***(6868-ը փոխանցված 2019թ., իսկ ստացված 3225-ը)***	
Գործերի ընդհանուր վիճակը		**Գործերի ընդհանուր վիճակը**	
Ավարտված գործերի քանակը	*Անավարտ գործերի քանակը*	*Ավարտված գործերի քանակը*	*Անավարտ գործերի քանակը*
2317	**6868**	**2987**	**7106**
2019թ. ընթացքում ընդհանուր քաղաքացիական գործերի քանակը **446 գործ *(218-ը փոխանցված 2018թ., իսկ ստացված 228-ը)***		**2020թ. ընթացքում** առկա ընդհանուր քաղաքացիական գործերի քանակը **575** գործ ***(187-ը փոխանցված 2019թ., իսկ ստացված 388-ը)***	
Քաղաքացիական գործերի ընդհանուր վիճակը		**Քաղաքացիական գործերի ընդհանուր վիճակը**	
Ավարտված գործերի քանակը	*Անավարտ գործերի քանակը*	*Ավարտված գործերի քանակը*	*Անավարտ գործերի քանակը*
259	**187**	**337**	**238**

Հատկանշական է նաև, որ Բարձրագույն դատական խորհրդի 21.07.2020թ. թիվ ԲԴԽ 47-Ո-107 որոշմամբ կասեցվել են ՀՀ սնանկության դատարանի 2 դատավորի լիազորությունները, որոնցից Գ.Նարինյանի վարույթում առկա է եղել 371 սնանկության և 26 քաղաքացիական գործ, իսկ Ա.Կուբանյանի վարույթում առկա է եղել՝ 395 սնանկության և 26 քաղաքացիական գործ: Նշված շուրջ 818 գործերը վերաբաշխվել են ՀՀ սնանկության դատարանի մյուս 10 դատավորների միջև[1]:

ՀՀ սնանկության դատարանի սնանկության և քաղաքացիական գործերի քանակական աննախադեպ աճի պայմաններում շարունակում է անփոփոխ մնալ դատավորների թվաքանակը, ինչը ողջամիտ համարվել չի կարող: Դատական գործերի քանակի ավելացմամբ և դատավորների գերծանրաբեռնվածությամբ պայմանավորված՝ այս իրավիճակն անլուծելի խնդիր է առաջ բերել դատական նիստերի նշանակման հարցում, քանի որ գործերի քանակի աճով պայմանավորված էական խնդիր է հանդիսանում նաև դատական նիստերը ժամանակին նշանակելու հարցը, ինչն անխտիր հանգեցնելու է դատական գործերի ողջամիտ ժամկետում քննության իրավունքի խախտման:

ՀՀ սնանկության դատարանի նման գերծանրաբեռնվածությունը վտանգ է պարունակում սնանկության արդարադատության ոլորտում դատական պաշտպանության իրավունքի իրացման արդյունավետությունն ու լիարժեքությունն ապահովելու տեսանկյունից, ինչը վերը ներկայացված վիճակագրական տվյալների համատեքստում հնարավոր կլինի կանխել դատավորների թվի ավելացմամբ:

Օրենսգրքի 25-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Սնանկության դատարանը գործում է **առնվազն** 12 դատավորի թվակազմով: Հիշյալ դրույթով գործածվող առնվազն եզրույթը ենթադրում է, որ օրենսդիրը սահմանել է Սնանկության դատարանի դատավորների թվակազմի նվազագույն չեմը, միաժամանակ, ընձեռելով այդ թվակազմի ավելացման իրավական հնարավորություն:

Ստեղծված իրավիճակն անկասկած հանգեցնում է ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասով և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով երաշխավորված արդար դատաքննության իրավունքի խախտման՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ դատարանի կամ դատավորի գերծանրաբեռնվածությունը՝ անկախ դատավորի ցուցաբերած աշխատասիրությունից, որևէ կերպ չի կարող արդարացում համարվել արդարադատություն հայցող անձի արդար դատաքննության իրավունքի խախտման համար, որի տարրերից է հանդիսանում ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունքը:

---

[1] *Հարկ է նկատել, որ նշված 10 դատավորներից մեկը հանդիսանում է ՀՀ սնանկության դատարանի նախագահ, որին մակագրվում է դատարան մուտք լինող գործերի 70 տոկոսը, իսկ մեկ այլ դատավոր, որը հանդիսանում է Դատավորների ընդհանուր ժողովի էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի անդամ՝ 75 տոկոսը:*

Նշվածից էլ ակնհայտ է, որ դատարանի գերծանրաբեռնվածությունը, որքան էլ ջանասիրաբար աշխատի դատավորը, միևնույնն է, ազդելու է դատական ակտի որակի վրա, ինչը, կարծում ենք, անընդունելի է: Դատավորը պետք է ունենա ժամանակ՝ գործի փաստական հանգամանքների, համապատասխան իրավական ակտերի վեր հանման և մանրակրկիտ ուսումնասիրության համար, որոնք ուղղակիորեն անհրաժեշտ են դատավորին հիմնավորված ու որակյալ դատական ակտ կայացնելու համար:

Հաշվի առնելով ամբողջ վերոշարադրյալը և հիմք ընդունելով Օրենսգրքի 89-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի կանոնը՝ առաջարկվում է

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի դատավորների թվակազմն ավելացնել 3-ով,

ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի դատավորների թվակազմն ավելացնել 3-ով,

ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի դատավորների թվակազմն ավելացնել 3-ով,

ՀՀ սնանկության դատարանի դատավորների թվակազմն ավելացնել 4-ով:

Նշված առաջարկի ընդունման դեպքում հնարավոր կլինի իրականացնել գործերի ոչ միայն բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննություն՝ հնարավորինս նվազեցնելով նյութական և դատավարական նորմերի խախտումները, այնպես էլ ապահովել գործերի ողջամիտ ժամկետում քննության իրավունքի կյանքի կոչմանը, ինչի արդյունքում այլևս քննարկման առարկա չեն դառնա արդար դատաքննության իրավունքի խախտման մասին պնդումները և ՀՀ դատական իշխանությունից օբյեկտիվ պատճառներով առաջացած դժգոհությունները:

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ՏԵՂԵԿԱՆՔ

Սնանկության դատարանում 4 դատավորների և նրանց կցված 12 ծառայողների, և Վերաքննիչ քաղաքացիական, Վերաքննիչ քրեական և Վերաքննիչ վարչական դատարաններում 3-ական դատավորների և նրանց կցված 7-ական ծառայողների /9 դատավոր, 21 ծառայող/, ինչպես նաև 14 գրասենյակի աշխատակիցների, 9 դատական կարգադրիչների և 2 տեխնիկական սպասարկում իրականացնող անձանց /ցրիչի/ավելացմամբ պայմանավորված պետական բյուջեում լրացուցիչ ծախսերի առաջացման վերաբերյալ /տարեկան հաշվարկ/

	ԸՆԴԱՄԵՆԸ			438,706.32

Այդ թվում՝

ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ԾԱԽՍԵՐ

Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածի				Գումար /հազար դրամ/
կոդը	անվանումը			
1	ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆ՝			316,113.37
	այդ թվում՝			241,977.03
4111	-Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ			58,042.36
4112	-Պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ			11,093.93
4113	-Քաղաքացիական, դատական և պետական ծառայողների պարգևատրում			2,359.00
4212	Ներքին ծառայություններ			
	այդ թվում՝			2,359.00
	Էներգետիկ ծառայություններ			910.00
4213	Կոմունալ ծառայություններ			
	այդ թվում՝			910.00
	Ջրամատակարարման և ջրահեռացման ծառայություններ			31,200.00
4214	Կապի ծառայություններ			6,510.00
4261	Գրասենյակային նյութեր և հագուստ			
	այդ թվում՝			5,600.00
	Գրասենյակային պիտույքներ			910.00
	Հագուստ և համազգեստ			350.00
4267	Սննդային և հանքային սննդի նյութեր /մաքրիչ նյութեր, հիգիենիկ նյութեր, լուծող և ներկեր/			560.00
4269	Հատուկ նպատակային այլ նյութեր			353,002.3
	Ընդամենը սարքերան ծախսեր			

ԿԱՊԻՏԱԼ ԾԱԽՍԵՐ

Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածի				Գումար /հազար դրամ/
Նրոը	անվանումը			
5113	Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում			80,592.00
5122	Վարչական սարքավորումներ			80,592.00
	այդ թվում /թվարկել/			
1	Համակարգիչ	60	524000	31,440.00
2	Տպիչ	39	70000	2,730.00
3	Բազմաֆունկցիոնալ տպիչ	17	210000	3,570.00
4	Անխափան սնուցման սարք	54	22000	1,188.00
5	Մետաղյա պահարան	26	100000	2,600.00
6	Գրասեղան/ դակիչների համար	22	28000	616.00
7	Գրասեղան/ նիստերի քարտուղարի դակիչների/	7	25000	175.00
8	Գրասեղան /դատավորի/	13	140000	1,820.00
9	Գրասեղան /դատավորի նիստերի /	7	115000	805.00
10	Գրասեղան /դատավորին կցված դատական ծառայողների /	52	48000	2,496.00
11	Աջնստապահարան	20	44000	880.00
12	Գրադարան	18	54000	972.00
13	Պահարան	18	38000	684.00
14	Բաղնաթոռ ղեկավարի	26	107000	2,782.00
15	Համակարգչային աթոռ	52	22000	1,144.00
16	Աթոռ գրասենյակային	106	9000	954.00
17	Դասական դահլիճի արգելաձող	28	45000	1,260.00
18	Նստարաններ նիստերի դահլիճների համար /4 տեղանոց/	28	40000	1,120.00
19	Վեցի ամիրան	7	24000	168.00
20	Ֆեմիդա ձևավորման համակարգ	7	2554000	17,878.00
21	Սկամեր	17	25000	425.00
22	Օդորակիչ /12000 /	7	280000	1,960.00
23	Օդորակիչ /9000 /	13	225000	2,925.00
5134	Նախագծահետազոտական ծախսեր			80,592.0
	Ընդամենը կապիտալ ծախսեր			

				Գումար/հազար դրամ/
Պետական հիմնարկների և կազմակերպությունների աշխատողների սոցիալական փաթեթի ապահովում	71	72000		5112

1. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ վերը նշված դատավորների տեղակայման հասցեները դեռևս հայտնի չեն, ուստի շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգման և նախագծահետազոտական ծախսերի վերաբերյալ հաշվարկներ հնարավոր չէ կատարել:

Դատական դեպարտամենտի ղեկավարի տեղակալ
ֆինանսատնտեսական հարցերով — Ա. Ստեփանյան

Դատական դեպարտամենտի ֆինանսաբյուջետային վարչության պետ՝ — Լ.Գասպարյան

10.05.2021թ.

ՏԵՂԵԿԱՆՔ

Մնանկության դատարանում 4 դատավորների և նրանց կցված 12 ծառայողների, և Վերաքննիչ քաղաքացիական, Վերաքննիչ քրեական և Վերաքննիչ վարչական դատարաններում 3-ական դատավորների և նրանց կցված 7-ական ծառայողների /9 դատավոր, 21 ծառայող/, ինչպես նաև 14 գրասենյակի աշխատակիցների, 9 դատական կարգադրիչների և 2 տեխ. սպասարկողի /ցրիչի/ ավելացմամբ պայմանավորված պետական բյուջեում լրացուցիչ ծախսերի առաջացման վերաբերյալ

ԲԴԽ և ՀՀ դատարաններ 2021	2021 ԹՎԱԿԱՆ								
	ԸՆԴԱՄԵՆԸ ՏԱՐԵԿԱՆ ԱԵԽԱՏԱՎԱՐՁԻ ՖՈՆԴ								
	Ընդամենը	Դատավոր	Ծառայող և տեխ. Սպաս.	Ընդամենը դատավոր+ծառայող+ի երթապահություն	Դատավոր	Ծառայող և տեխ. Սպաս.	Հերթապահություն	2021թ. պարգևատրման ֆոնդ/4113,4112/	Ընդամենը աշխատավարձի ֆոնդ
2	3	4	5	7	8	9	11	14	
ԸՆԴԱՄԵՆԸ	71	13	58	230,454,309.8	119,514,980.0	110,939,329.8	0.0	69,136,292.9	311,113,318.2
Դատարաններ	71	13	58	230,454,309.8	119,514,980.0	110,939,329.8	0.0	69,136,292.9	311,113,318.2
									0.0
Վերաքննիչ դատարան	43	9	34	152,936,183.4	85,122,180	67,814,003	0.0	45,880,855.0	206,463,847.6
Առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան	28	4	24	77,518,126.4	34,392,800	43,125,326	0.0	23,255,437.9	104,649,470.6

Դատական դեպարտամենտի ղեկավարի տեղակալ ֆինանսատնտեսական հարցերով Ա.Սանոյան

Ֆինանսաբյուջետային վարչության պետ՝ Լ.Գասպարյան

10.05.2021թ.

ՍՏՈՐԱԲԱԺԱՆՄԱՆ ԱՆՎԱՆՈՒՄ	Վերաքննիչ դատարան											
ԾԱՌԱՅՈՂՆԵՐ և ՏԵԽ. ՍՊԱՍ.	2021ԹՎԱԿԱՆ											
հ/հ	Ազգանուն, Անուն	Պաշտոն	հաստիք	Ստաժ	Գործակից	Բազային դրույքաչափ	Հավելավճար	Հավելում (բարձր լեռնային կամ գաղտնիության)	Ըստ դատ.ծառ.պաշտ.ենթախմբ.	Սահմանվող պաշտոնային դրույքաչափ	Ընդամենը ամսական աշխատավարձ	Ընդամենը տարեկան աշխատավարձ 2021
1	թափուր	Դատավորի օգնական	1	0	3.88	66,140.00			Գ-2	256,623.20	256,623.20	3,336,101.60
2	թափուր	Դատավորի օգնական	1	0	3.88	66,140.00			Գ-2	256,623.20	256,623.20	3,336,101.60
3	թափուր	Դատավորի օգնական	1	0	3.88	66,140.00			Գ-2	256,623.20	256,623.20	3,336,101.60
4	թափուր	Դատավորի գործավար	1	0	1.68	66,140.00			Կ-1	111,115.20	111,115.20	1,444,497.60
5	թափուր	Դատավորի գործավար	1	0	1.68	66,140.00			Կ-1	111,115.20	111,115.20	1,444,497.60
6	թափուր	Դատավորի գործավար	1	0	1.68	66,140.00			Կ-1	111,115.20	111,115.20	1,444,497.60
7	թափուր	Դատական նիստերի քարտուղար	1	0	1.68	66,140.00			Կ-1	111,115.20	111,115.20	1,444,497.60
1	թափուր	Դատավորի օգնական	1	0	3.88	66,140.00			Գ-2	256,623.20	256,623.20	3,336,101.60
2	թափուր	Դատավորի օգնական	1	0	3.88	66,140.00			Գ-2	256,623.20	256,623.20	3,336,101.60
3	թափուր	Դատավորի օգնական	1	0	3.88	66,140.00			Գ-2	256,623.20	256,623.20	3,336,101.60
4	թափուր	Դատավորի գործավար	1	0	1.68	66,140.00			Կ-1	111,115.20	111,115.20	1,444,497.60
5	թափուր	Դատավորի գործավար	1	0	1.68	66,140.00			Կ-1	111,115.20	111,115.20	1,444,497.60
6	թափուր	Դատավորի գործավար	1	0	1.68	66,140.00			Կ-1	111,115.20	111,115.20	1,444,497.60
7	թափուր	Դատական նիստերի քարտուղար	1	0	1.68	66,140.00			Կ-1	111,115.20	111,115.20	1,444,497.60
1	թափուր	Դատավորի օգնական	1	0	3.88	66,140.00			Գ-2	256,623.20	256,623.20	3,336,101.60
2	թափուր	Դատավորի օգնական	1	0	3.88	66,140.00			Գ-2	256,623.20	256,623.20	3,336,101.60
3	թափուր	Դատավորի օգնական	1	0	3.88	66,140.00			Գ-2	256,623.20	256,623.20	3,336,101.60
4	թափուր	Դատավորի գործավար	1	0	1.68	66,140.00			Կ-1	111,115.20	111,115.20	1,444,497.60
5	թափուր	Դատավորի գործավար	1	0	1.68	66,140.00			Կ-1	111,115.20	111,115.20	1,444,497.60
6	թափուր	Դատավորի գործավար	1	0	1.68	66,140.00			Կ-1	111,115.20	111,115.20	1,444,497.60
7	թափուր	Դատական նիստերի քարտուղար	1	0	1.68	66,140.00			Կ-1	111,115.20	111,115.20	1,444,497.60
51	թափուր	Գրասենյակի առաջատար մասնագետ	1	0	2.28	66,140.00			Ա-2	150,799.20	150,799.20	1,960,389.60
51	թափուր	Գրասենյակի առաջատար մասնագետ	1	0	2.28	66,140.00			Ա-2	150,799.20	150,799.20	1,960,389.60
51	թափուր	Գրասենյակի առաջատար մասնագետ	1	0	2.28	66,140.00			Ա-2	150,799.20	150,799.20	1,960,389.60
51	թափուր	Գրասենյակի առաջին կարգի մասնագետ	1	0	1.45	66,140.00			Կ-2	95,903.00	95,903.00	1,246,739.00
51	թափուր	Գրասենյակի առաջին կարգի մասնագետ	1	0	1.45	66,140.00			Կ-2	95,903.00	95,903.00	1,246,739.00
51	թափուր	Գրասենյակի առաջին կարգի մասնագետ	1	0	1.45	66,140.00			Կ-2	95,903.00	95,903.00	1,246,739.00
51	թափուր	Ավագ կարգադրիչ	1	0	1.96	66,140.00			Ա-3	129,634.40	129,634.40	1,685,247.20
51	թափուր	Ավագ կարգադրիչ	1	0	1.96	66,140.00			Ա-3	129,634.40	129,634.40	1,685,247.20
51	թափուր	Ավագ կարգադրիչ	1	0	1.96	66,140.00			Ա-3	129,634.40	129,634.40	1,685,247.20
51	թափուր	Կարգադրիչ	1	0	1.68	66,140.00			Կ-1	111,115.20	111,115.20	1,444,497.60
51	թափուր	Կարգադրիչ	1	0	1.68	66,140.00			Կ-1	111,115.20	111,115.20	1,444,497.60
51	թափուր	Կարգադրիչ	1	0	1.68	66,140.00			Կ-1	111,115.20	111,115.20	1,444,497.60
51	թափուր	Կարգադրիչ	1	0	1.68	66,140.00			Կ-1	111,115.20	111,115.20	1,444,497.60
ԸՆԴԱՄԵՆԸ			34.00	0.00	78.87	2,248,760.00	0.00	0.00		5,216,461.80	5,216,461.80	67,814,003.40

ՍՏՈՐԱԲԱԺԱՆՄԱՆ ԱՆՎԱՆՈՒՄ	Սնանկության դատարան											
ԾԱՌԱՅՈՂՆԵՐ և ՏԵԽ. ՍՊԱՍ.	2021ԹՎԱԿԱՆ											
հ/հ	Ազգանուն, Անուն	Պաշտոն	հաստիք	Ստաժ	Գործակից	Բազային դրույքաչափ	Հավելավճար	Հավելում (բարձր լեռնային կամ գաղտնիության)	Ըստ դատ.ծառ.պաշտ.ենթախմբ.	Սահմանվող պաշտոնային դրույքաչափ	Ընդամենը ամսական աշխատավարձ	Ընդամենը տարեկան աշխատավարձ 2021
1	թափուր	Դատավորի օգնական	1	0	3.88	66,140.00			Գ-2	256,623.20	256,623.20	3,336,101.60
2	թափուր	Դատավորի օգնական	1	0	3.88	66,140.00			Գ-2	256,623.20	256,623.20	3,336,101.60
3	թափուր	Դատավորի օգնական	1	0	3.88	66,140.00			Գ-2	256,623.20	256,623.20	3,336,101.60
4	թափուր	Դատավորի օգնական	1	0	3.88	66,140.00			Գ-2	256,623.20	256,623.20	3,336,101.60
18	թափուր	Դատական նիստերի քարտուղար	1	0	1.68	66,140.00			Կ-1	111,115.20	111,115.20	1,444,497.60
19	թափուր	Դատական նիստերի քարտուղար	1	0	1.68	66,140.00			Կ-1	111,115.20	111,115.20	1,444,497.60

20	թափուր	Դատական նիստերի քարտուղար	1	0	1.68	66,140.00			Կ-1	111,115.20	111,115.20	1,444,497.60
21	թափուր	Դատական նիստերի քարտուղար	1	0	1.68	66,140.00			Կ-1	111,115.20	111,115.20	1,444,497.60
48	թափուր	Դատավորի գործավար	1	0	1.68	66,140.00			Կ-1	111,115.20	111,115.20	1,444,497.60
49	թափուր	Դատավորի գործավար	1	0	1.68	66,140.00			Կ-1	111,115.20	111,115.20	1,444,497.60
50	թափուր	Դատավորի գործավար	1	0	1.68	66,140.00			Կ-1	111,115.20	111,115.20	1,444,497.60
51	թափուր	Դատավորի գործավար	1	0	1.68	66,140.00			Կ-1	111,115.20	111,115.20	1,444,497.60
51	թափուր	Գրասենյակի առաջատար մասնագետ	1	0	2.28	66,140.00			Ա-2	150,799.20	150,799.20	1,960,389.60
51	թափուր	Գրասենյակի առաջատար մասնագետ	1	0	2.28	66,140.00			Ա-2	150,799.20	150,799.20	1,960,389.60
51	թափուր	Գրասենյակի առաջատար մասնագետ	1	0	2.28	66,140.00			Ա-2	150,799.20	150,799.20	1,960,389.60
51	թափուր	Գրասենյակի առաջատար մասնագետ	1	0	2.28	66,140.00			Ա-2	150,799.20	150,799.20	1,960,389.60
51	թափուր	Գրասենյակի առաջին կարգի մասնագետ	1	0	1.45	66,140.00			Կ-2	95,903.00	95,903.00	1,246,739.00
51	թափուր	Գրասենյակի առաջին կարգի մասնագետ	1	0	1.45	66,140.00			Կ-2	95,903.00	95,903.00	1,246,739.00
51	թափուր	Գրասենյակի առաջին կարգի մասնագետ	1	0	1.45	66,140.00			Կ-2	95,903.00	95,903.00	1,246,739.00
51	թափուր	Գրասենյակի առաջին կարգի մասնագետ	1	0	1.45	66,140.00			Կ-2	95,903.00	95,903.00	1,246,739.00
51	թափուր	Ավագ կարգադրիչ	1	0	1.96	66,140.00			Ա-3	129,634.40	129,634.40	1,685,247.20
51	թափուր	Կարգադրիչ	1	0	1.68	66,140.00			Կ-1	111,115.20	111,115.20	1,444,497.60
50	թափուր	Տրիչ	1	0	1.00	66,140.00				87,180.00	87,180.00	1,133,340.00
51	թափուր	Տրիչ	1	0	1.00	66,140.00				87,180.00	87,180.00	1,133,340.00
ԸՆԴԱՄԵՆԸ			24.00	0.00	49.52	1,587,360.00	0.00	0.00		3,317,332.80	3,317,332.80	43,125,326.40

ՍՏՈՐԱԲԱԺԱՆՄԱՆ ԱՆՎԱՆՈՒՄ				Վերաքննիչ դատարան									
Դատավորներ				2021 ԹՎԱԿԱՆ									
հ/հ	Ազգանուն, Անուն	Պաշտոն		Դատավորի ստաժ	Ստաժի %-ը	Բազային դրույքաչափ	գործակից	հիմնական աշխատավարձ	հիմնական աշխատավարձի նկատմամբ սահմանված հավելավճար < 30%	հիմնական աշխատավարձի և հավելավճարի գումարը	Բարձր Լեռնային՝ *Ամսական գրվում է նաև 15% լրացուցիչ վճար*	Ընդամենը ամսական աշխատավարձ 2021	ԸՆԴԱՄԵՆԸ ԱՇԽԱՏԱՎԱՐՁ 2021
16	Թափուր	Դատավոր	1.00	0	0	66,140.00	11.00	727,540.00	0.00	727,540.00		727,540.00	9,458,020.00
16	Թափուր	Դատավոր	1.00	0	0	66,140.00	11.00	727,540.00	0.00	727,540.00		727,540.00	9,458,020.00
16	Թափուր	Դատավոր	1.00	0	0	66,140.00	11.00	727,540.00	0.00	727,540.00		727,540.00	9,458,020.00
16	Թափուր	Դատավոր	1.00	0	0	66,140.00	11.00	727,540.00	0.00	727,540.00		727,540.00	9,458,020.00
16	Թափուր	Դատավոր	1.00	0	0	66,140.00	11.00	727,540.00	0.00	727,540.00		727,540.00	9,458,020.00
16	Թափուր	Դատավոր	1.00	0	0	66,140.00	11.00	727,540.00	0.00	727,540.00		727,540.00	9,458,020.00
16	Թափուր	Դատավոր	1.00	0	0	66,140.00	11.00	727,540.00	0.00	727,540.00		727,540.00	9,458,020.00
16	Թափուր	Դատավոր	1.00	0	0	66,140.00	11.00	727,540.00	0.00	727,540.00		727,540.00	9,458,020.00
16	Թափուր	Դատավոր	1.00	0	0	66,140.00	11.00	727,540.00	0.00	727,540.00		727,540.00	9,458,020.00
Ընդամենը			9.00	0.00	0.00	595,260.00	99.00	6,547,860.00	0.00	6,547,860.00	0.00	6,547,860.00	85,122,180.00

ՍՏՈՐԱԲԱԺԱՆՄԱՆ ԱՆՎԱՆՈՒՄ				Սահմանադրական դատարան									
Դատավորներ				2021 ԹՎԱԿԱՆ									
հ/հ	Ազգանուն, Անուն	Պաշտոն		Դատավորի ստաժ	Ստաժի %-ը	Բազային դրույքաչափ	գործակից	հիմնական աշխատավարձ	հիմնական աշխատավարձի նկատմամբ սահմանված հավելավճար < 30%	հիմնական աշխատավարձի և հավելավճարի գումարը	Բարձր Լեռնային՝ *Ամսական գրվում է նաև 15% լրացուցիչ վճար*	Ընդամենը ամսական աշխատավարձ 2021	ԸՆԴԱՄԵՆԸ ԱՇԽԱՏԱՎԱՐՁ 2021
15	Թափուր	Դատավոր	1.00	0	0	66,140.00	10.00	661,400.00	0.00	661,400.00		661,400.00	8,598,200.00
13	Թափուր	Դատավոր	1.00	0	0	66,140.00	10.00	661,400.00	0.00	661,400.00		661,400.00	8,598,200.00
14	Թափուր	Դատավոր	1.00	0	0	66,140.00	10.00	661,400.00	0.00	661,400.00		661,400.00	8,598,200.00
15	Թափուր	Դատավոր	1.00	0	0	66,140.00	10.00	661,400.00	0.00	661,400.00		661,400.00	8,598,200.00
Ընդամենը			4.00	0.00	0.00	264,560.00	40.00	2,645,600.00	0.00	2,645,600.00	0.00	2,645,600.00	34,392,800.00

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՎ ԴԱՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՊԱՐԳԵՎԱՏՐՄԱՆ ՖՈՆԴ 4112, 4113

ՍՏՈՐԱԲԱԺԱՆՄԱՆ ԱՆՎԱՆՈՒՄ	2021թ. /հիմնական ֆ լրացուցիչ աշխատավարձի տարեկան ֆոնդ/	2021 թ. /4113/	2021 թ. /4112/
Վերաքննիչ դատարան	152,936,183.4	6,781,400	39,099,455
Սնանկության դատարան	77,518,126.4	4,312,533	18,942,905
ԸՆԴԱՄԵՆԸ ԴԱՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՊԱՐԳԵՎԱՏՐՄԱՆ ՖՈՆԴ /ԴՐԱՄ/		11,093,933	58,042,360

ՏԵՂԵԿԱՆՔ

01.06.2021թ.-ից Սնանկության դատարանում 4 դատավորների և նրանց կցված 12 ծառայողների, և Վերաքննիչ քաղաքացիական, Վերաքննիչ քրեական և Վերաքննիչ վարչական դատարաններում 3-ական դատավորների և նրանց կցված 7-ական ծառայողների /9 դատավոր, 21 ծառայող/, ինչպես նաև 14 գրասենյակի աշխատակիցների, 9 դատական կարգադրիչների և 2 տեխնիկական սպասարկում իրականացնող անձանց /ցրիչի/ավելացմամբ պայմանավորված պետական բյուջեում լրացուցիչ ծախսերի առաջացման վերաբերյալ

	ԸՆԴԱՄԵՆԸ			362,184.20

Այդ թվում՝

ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ԾԱԽՍԵՐ

Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածի				Գումար /հազար դրամ/
կոդը	անվանումը			
1	ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆ *			253,510.20
	այդ թվում՝			
4111	-Աշխատողների աշխատավարձեր և հավելյավճարներ			197,174.60
4112	- Պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ			49,508.57
4113	-Քաղաքացիական, դատական և պետական ծառայողների պարգևատրում			6,827.04
4212	Էներգետիկ ծառայություններ			1,400.00
	այդ թվում՝			
	Էներգետիկ ծառայություններ			1,400.00
4213	Կոմունալ ծառայություններ			530.00
	այդ թվում՝			
	Ջրամատակարարման և ջրահեռացման ծառայություններ			530.00
4214	Կապի ծառայություններ			18,200.00
4261	Գրասենյակային նյութեր և հագուստ			4,210.00
	այդ թվում՝			
	Գրասենյակային պիտույքներ			3,300.00
	Հագուստ և համազգեստ			910.00
4267	Կենցաղային և հարդային սենդի նյութեր /մաքրիչ նյութեր, հիգիենիկ նյութեր, սնունդ և ոմպելիք/			200.00
4269	Հատուկ նպատակային այլ նյութեր			560.00
	Ընդամենը տարեկան ծախսեր			278,610.2

ԿԱՊԻՏԱԼ ԾԱԽՍԵՐ

Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածի				Գումար /հազար դրամ/
կոդը	անվանումը			
5113	Շենքերի և շինությունների կապ.վերանորոգում			
5122	Վարչական սարքավորումներ			80,592.00
	այդ թվում՝ /թվարկել/			
1	Համակարգիչ	60	524000	31,440.00
2	Տպիչ	39	70000	2,730.00
3	Բազմաֆունկցիոնալ տպիչ	17	210000	3,570.00
4	Անխափան սնուցման սարք	54	22000	1,188.00
5	Մեռուցիչ պահարան	26	100000	2,600.00
6	Գրասեղան/ դահլիճում կողմների համար	22	28000	616.00
7	Գրասեղան/ նիստերի քարտուղարի դահլիճում/	7	25000	175.00
8	Գրասեղան /դատավորի/	13	140000	1,820.00
9	Գրասեղան /դատավորի նիստերի /	7	115000	805.00
10	Գրասեղան /դատավորին կցված դատական ծառայողների /	52	48000	2,496.00
11	Ձեստապահարան	20	44000	880.00
12	Գրապահարան	18	54000	972.00
13	Պահարան	18	38000	684.00
14	Բազկաթոռ դնկավարի	26	107000	2,782.00
15	Համակարգչային աթոռ	52	22000	1,144.00
16	Աթոռ գրասենյակային	106	9000	954.00
17	Դատական դահլիճի արգելաճաղ	28	45000	1,260.00
18	Նստարաններ նիստերի դահլիճների համար /4 տեղանոց/	28	40000	1,120.00
19	Վկայի ամբիոն	7	24000	168.00
20	Ֆեմիդա ձայնագրաման համակարգ	7	2554000	17,878.00
21	Սկաներ	17	25000	425.00
22	Օդորակիչ /12000 /	7	280000	1,960.00
23	Օդորակիչ /9000 /	13	225000	2,925.00
5134	Նախագծահետազոտական ծախսեր			
	Ընդամենը կապիտալ ծախսեր			80,592.0

			Գումար/հազար դրամ/
Պետական հիմնարկների և կազմակերպությունների աշխատողների սոցիալական փաթեթի ապահովում	71	42000	2982

1. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ վերը նշված դատավորների տեղակայման հասցեները դեռևս հայտնի չեն, ուստի շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգման և նախագծահետազոտական ծախսերի վերաբերյալ հաշվարկներ հնարավոր չէ կատարել:

Դատական դեպարտամենտի ղեկավարի տեղակալ
ֆինանսատնտեսական հարցերով — Ա. Ստեփանյան

Դատական դեպարտամենտի ֆինանսաբյուջետային վարչության պետ՝ — Լ.Գասպարյան

10.05.2021թ.

ՏԵՂԵԿԱՆՔ

Սնանկության դատարանում 4 դատավորների և նրանց կցված 12 ծառայողների, և Վերաքննիչ քաղաքացիական, Վերաքննիչ քրեական և Վերաքննիչ վարչական դատարաններում 3-ական դատավորների և նրանց կցված 7-ական ծառայողների /9 դատավոր, 21 ծառայող/, ինչպես նաև 14 գրասենյակի աշխատակիցների, 9 դատական կարգադրիչների և 2 տեխ. սպասարկողի /ցրիչի/ ավելացմամբ պայմանավորված պետական բյուջեում լրացուցիչ ծախսերի առաջացման վերաբերյալ

ԲԴԽ և ՀՀ դատարաններ 2021	2021 ԹՎԱԿԱՆ /01.06.2021-31.12.2021թթ./								
	ԸՆԴԱՄԵՆԸ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ՖՈՆԴ								
	Ընդամենը	Դատավոր	Ծառայող և տեխ. Սպաս.	Ընդամենը դատավոր+ծառայող+հերթապահություն	Դատավոր	Ծառայող և տեխ. Սպաս.	Հերթապահություն	2021թ. պարգևատրման ֆոնդ/4113,4112/	Ընդամենը աշխատավարձի ֆոնդ
2	3	4	5	7	8	9	11	14	
ԸՆԴԱՄԵՆԸ	71	13	58	187,785,336.8	119,514,980.0	68,270,356.8	0.0	56,335,601.0	253,510,204.7
Դատարաններ	71	13	58	187,785,336.8	119,514,980.0	68,270,356.8	0.0	56,335,601.0	253,510,204.7
									0.0
Վերաքննիչ դատարան	43	9	34	126,853,874.4	85,122,180	41,731,694	0.0	38,056,162.3	171,252,730.4
Առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան	28	4	24	60,931,462.4	34,392,800	26,538,662	0.0	18,279,438.7	82,257,474.2

Դատական դեպարտամենտի ղեկավարի տեղակալ ֆինանսատնտեսական հարցերով Ա. Ստեփանյան

Ֆինանսաբյուջետային վարչության պետ՝ Լ.Գասպարյան

10.05.2021թ.

ՍՏՈՐԱԲԱԺԱՆՄԱՆ ԱՆՎԱՆՈՒՄ	Վերաքննիչ դատարան											
ԾԱՌԱՅՈՂՆԵՐ և ՏԵԽ. ՍՊԱՍ.	2021ԹՎԱԿԱՆ /01.06.2021-31.12.2021/											
հ/հ	Ազգանուն, Անուն	Պաշտոն	հաստիք	Ստաժ	Գործակից	Բազային դրույքաչափ	Հավելավճար	Հավելում (բարձր լեռնային կամ գաղտնիության)	Ըստ դատ.ծառ.պաշտ.ենթախմբ.	Սահմանվող պաշտոնային դրույքաչափ	Ընդամենը ամսական աշխատավարձ	Ընդամենը տարեկան աշխատավարձ 2021
1	թափուր	Դատավորի օգնական	1	0	3.88	66,140.00			Գ-2	256,623.20	256,623.20	2,052,985.60
2	թափուր	Դատավորի օգնական	1	0	3.88	66,140.00			Գ-2	256,623.20	256,623.20	2,052,985.60
3	թափուր	Դատավորի օգնական	1	0	3.88	66,140.00			Գ-2	256,623.20	256,623.20	2,052,985.60
4	թափուր	Դատավորի գործավար	1	0	1.68	66,140.00			Կ-1	111,115.20	111,115.20	888,921.60
5	թափուր	Դատավորի գործավար	1	0	1.68	66,140.00			Կ-1	111,115.20	111,115.20	888,921.60
6	թափուր	Դատավորի գործավար	1	0	1.68	66,140.00			Կ-1	111,115.20	111,115.20	888,921.60
7	թափուր	Դատական նիստերի քարտուղար	1	0	1.68	66,140.00			Կ-1	111,115.20	111,115.20	888,921.60
1	թափուր	Դատավորի օգնական	1	0	3.88	66,140.00			Գ-2	256,623.20	256,623.20	2,052,985.60
2	թափուր	Դատավորի օգնական	1	0	3.88	66,140.00			Գ-2	256,623.20	256,623.20	2,052,985.60
3	թափուր	Դատավորի օգնական	1	0	3.88	66,140.00			Գ-2	256,623.20	256,623.20	2,052,985.60
4	թափուր	Դատավորի գործավար	1	0	1.68	66,140.00			Կ-1	111,115.20	111,115.20	888,921.60
5	թափուր	Դատավորի գործավար	1	0	1.68	66,140.00			Կ-1	111,115.20	111,115.20	888,921.60
6	թափուր	Դատավորի գործավար	1	0	1.68	66,140.00			Կ-1	111,115.20	111,115.20	888,921.60
7	թափուր	Դատական նիստերի քարտուղար	1	0	1.68	66,140.00			Կ-1	111,115.20	111,115.20	888,921.60
1	թափուր	Դատավորի օգնական	1	0	3.88	66,140.00			Գ-2	256,623.20	256,623.20	2,052,985.60
2	թափուր	Դատավորի օգնական	1	0	3.88	66,140.00			Գ-2	256,623.20	256,623.20	2,052,985.60
3	թափուր	Դատավորի օգնական	1	0	3.88	66,140.00			Գ-2	256,623.20	256,623.20	2,052,985.60
4	թափուր	Դատավորի գործավար	1	0	1.68	66,140.00			Կ-1	111,115.20	111,115.20	888,921.60
5	թափուր	Դատավորի գործավար	1	0	1.68	66,140.00			Կ-1	111,115.20	111,115.20	888,921.60
6	թափուր	Դատավորի գործավար	1	0	1.68	66,140.00			Կ-1	111,115.20	111,115.20	888,921.60
7	թափուր	Դատական նիստերի քարտուղար	1	0	1.68	66,140.00			Կ-1	111,115.20	111,115.20	888,921.60
51	թափուր	Գրասենյակի առաջատար մասնագետ	1	0	2.28	66,140.00			Ա-2	150,799.20	150,799.20	1,206,393.60
51	թափուր	Գրասենյակի առաջատար մասնագետ	1	0	2.28	66,140.00			Ա-2	150,799.20	150,799.20	1,206,393.60
51	թափուր	Գրասենյակի առաջատար մասնագետ	1	0	2.28	66,140.00			Ա-2	150,799.20	150,799.20	1,206,393.60
51	թափուր	Գրասենյակի առաջին կարգի մասնագետ	1	0	1.45	66,140.00			Կ-2	95,903.00	95,903.00	767,224.00
51	թափուր	Գրասենյակի առաջին կարգի մասնագետ	1	0	1.45	66,140.00			Կ-2	95,903.00	95,903.00	767,224.00
51	թափուր	Գրասենյակի առաջին կարգի մասնագետ	1	0	1.45	66,140.00			Կ-2	95,903.00	95,903.00	767,224.00
51	թափուր	Ավագ կարգադրիչ	1	0	1.96	66,140.00			Ա-3	129,634.40	129,634.40	1,037,075.20
51	թափուր	Ավագ կարգադրիչ	1	0	1.96	66,140.00			Ա-3	129,634.40	129,634.40	1,037,075.20
51	թափուր	Ավագ կարգադրիչ	1	0	1.96	66,140.00			Ա-3	129,634.40	129,634.40	1,037,075.20
51	թափուր	Կարգադրիչ	1	0	1.68	66,140.00			Կ-1	111,115.20	111,115.20	888,921.60
51	թափուր	Կարգադրիչ	1	0	1.68	66,140.00			Կ-1	111,115.20	111,115.20	888,921.60
51	թափուր	Կարգադրիչ	1	0	1.68	66,140.00			Կ-1	111,115.20	111,115.20	888,921.60
51	թափուր	Կարգադրիչ	1	0	1.68	66,140.00			Կ-1	111,115.20	111,115.20	888,921.60
ԸՆԴԱՄԵՆԸ			34.00	0.00	78.87	2,248,760.00	0.00	0.00		5,216,461.80	5,216,461.80	41,731,694.40

ՍՏՈՐԱԲԱԺԱՆՄԱՆ ԱՆՎԱՆՈՒՄ	Անանկության դատարան											
ԾԱՌԱՅՈՂՆԵՐ և ՏԵԽ. ՍՊԱՍ.	2021ԹՎԱԿԱՆ /01.06.2021-31.12.2021/											
հ/հ	Ազգանուն, Անուն	Պաշտոն	հաստիք	Ստաժ	Գործակից	Բազային դրույքաչափ	Հավելավճար	Հավելում (բարձր լեռնային կամ գաղտնիության)	Ըստ դատ.ծառ.պաշտ.ենթախմբ.	Սահմանվող պաշտոնային դրույքաչափ	Ընդամենը ամսական աշխատավարձ	Ընդամենը տարեկան աշխատավարձ 2021
1	թափուր	Դատավորի օգնական	1	0	3.88	66,140.00			Գ-2	256,623.20	256,623.20	2,052,985.60
2	թափուր	Դատավորի օգնական	1	0	3.88	66,140.00			Գ-2	256,623.20	256,623.20	2,052,985.60
3	թափուր	Դատավորի օգնական	1	0	3.88	66,140.00			Գ-2	256,623.20	256,623.20	2,052,985.60
4	թափուր	Դատավորի օգնական	1	0	3.88	66,140.00			Գ-2	256,623.20	256,623.20	2,052,985.60
18	թափուր	Դատական նիստերի քարտուղար	1	0	1.68	66,140.00			Կ-1	111,115.20	111,115.20	888,921.60
19	թափուր	Դատական նիստերի քարտուղար	1	0	1.68	66,140.00			Կ-1	111,115.20	111,115.20	888,921.60

20	թափուր	Դատական նիստերի քարտուղար	1	0	1.68	66,140.00			Կ-1	111,115.20	111,115.20	888,921.60
21	թափուր	Դատական նիստերի քարտուղար	1	0	1.68	66,140.00			Կ-1	111,115.20	111,115.20	888,921.60
48	թափուր	Դատավորի գործավար	1	0	1.68	66,140.00			Կ-1	111,115.20	111,115.20	888,921.60
49	թափուր	Դատավորի գործավար	1	0	1.68	66,140.00			Կ-1	111,115.20	111,115.20	888,921.60
50	թափուր	Դատավորի գործավար	1	0	1.68	66,140.00			Կ-1	111,115.20	111,115.20	888,921.60
51	թափուր	Դատավորի գործավար	1	0	1.68	66,140.00			Կ-1	111,115.20	111,115.20	888,921.60
51	թափուր	Գրասենյակի առաջատար մասնագետ	1	0	2.28	66,140.00			Ա-2	150,799.20	150,799.20	1,206,393.60
51	թափուր	Գրասենյակի առաջատար մասնագետ	1	0	2.28	66,140.00			Ա-2	150,799.20	150,799.20	1,206,393.60
51	թափուր	Գրասենյակի առաջատար մասնագետ	1	0	2.28	66,140.00			Ա-2	150,799.20	150,799.20	1,206,393.60
51	թափուր	Գրասենյակի առաջատար մասնագետ	1	0	2.28	66,140.00			Ա-2	150,799.20	150,799.20	1,206,393.60
51	թափուր	Գրասենյակի առաջին կարգի մասնագետ	1	0	1.45	66,140.00			Կ-2	95,903.00	95,903.00	767,224.00
51	թափուր	Գրասենյակի առաջին կարգի մասնագետ	1	0	1.45	66,140.00			Կ-2	95,903.00	95,903.00	767,224.00
51	թափուր	Գրասենյակի առաջին կարգի մասնագետ	1	0	1.45	66,140.00			Կ-2	95,903.00	95,903.00	767,224.00
51	թափուր	Գրասենյակի առաջին կարգի մասնագետ	1	0	1.45	66,140.00			Կ-2	95,903.00	95,903.00	767,224.00
51	թափուր	Ավագ կարգադրիչ	1	0	1.96	66,140.00			Ա-3	129,634.40	129,634.40	1,037,075.20
51	թափուր	Կարգադրիչ	1	0	1.68	66,140.00			Կ-1	111,115.20	111,115.20	888,921.60
50	թափուր	Տրիչ	1	0	1.00	66,140.00				87,180.00	87,180.00	697,440.00
51	թափուր	Տրիչ	1	0	1.00	66,140.00				87,180.00	87,180.00	697,440.00
	ԸՆԴԱՄԵՆԸ		24.00	0.00	49.52	1,587,360.00	0.00	0.00		3,317,332.80	3,317,332.80	26,538,662.40

ՍՏՈՐԱԲԱԺԱՆՄԱՆ ԱՆՎԱՆՈՒՄ				Վերաքննիչ դատարան									
Դատավորներ				2021ԹՎԱԿԱՆ /01.06.2021-31.12.2021/									
հ/հ	Ազգանուն, Անուն	Պաշտոն		Դատավորի ստաժ	Ստաժի %-ը	Բազային դրույքաչափ	գործակից	հիմնական աշխատավարձ	հիմնական աշխատավարձի նկատմամբ սահմանված հավելավճար < 30%	հիմնական աշխատավարձի և հավելավճարի գումարը	Բարձր Լեռնային+ *Ամսական գրվում է նաև 15% լրացուցիչ վճար*	Ընդամենը ամսական աշխատավարձ 2021	ԸՆԴԱՄԵՆԸ ԱՇԽԱՏԱՎԱՐՁ 2021
16	Թափուր	Դատավոր	1.00	0	0	66,140.00	11.00	727,540.00	0.00	727,540.00		727,540.00	9,458,020.00
16	Թափուր	Դատավոր	1.00	0	0	66,140.00	11.00	727,540.00	0.00	727,540.00		727,540.00	9,458,020.00
16	Թափուր	Դատավոր	1.00	0	0	66,140.00	11.00	727,540.00	0.00	727,540.00		727,540.00	9,458,020.00
16	Թափուր	Դատավոր	1.00	0	0	66,140.00	11.00	727,540.00	0.00	727,540.00		727,540.00	9,458,020.00
16	Թափուր	Դատավոր	1.00	0	0	66,140.00	11.00	727,540.00	0.00	727,540.00		727,540.00	9,458,020.00
16	Թափուր	Դատավոր	1.00	0	0	66,140.00	11.00	727,540.00	0.00	727,540.00		727,540.00	9,458,020.00
16	Թափուր	Դատավոր	1.00	0	0	66,140.00	11.00	727,540.00	0.00	727,540.00		727,540.00	9,458,020.00
16	Թափուր	Դատավոր	1.00	0	0	66,140.00	11.00	727,540.00	0.00	727,540.00		727,540.00	9,458,020.00
16	Թափուր	Դատավոր	1.00	0	0	66,140.00	11.00	727,540.00	0.00	727,540.00		727,540.00	9,458,020.00
Ընդամենը			9.00	0.00	0.00	595,260.00	99.00	6,547,860.00	0.00	6,547,860.00	0.00	6,547,860.00	85,122,180.00

ՍՏՈՐԱԲԱԺԱՆՄԱՆ ԱՆՎԱՆՈՒՄ				Մանկության դատարան									
Դատավորներ				2021ԹՎԱԿԱՆ /01.06.2021-31.12.2021/									
հ/հ	Ազգանուն, Անուն	Պաշտոն		Դատավորի ստաժ	Ստաժի %-ը	Բազային դրույքաչափ	գործակից	հիմնական աշխատավարձ	հիմնական աշխատավարձի նկատմամբ սահմանված հավելավճար < 30%	հիմնական աշխատավարձի և հավելավճարի գումարը	Բարձր Լեռնային+ *Ամսական գրվում է նաև 15% լրացուցիչ վճար*	Ընդամենը ամսական աշխատավարձ 2021	ԸՆԴԱՄԵՆԸ ԱՇԽԱՏԱՎԱՐՁ 2021
15	Թափուր	Դատավոր	1.00	0	0	66,140.00	10.00	661,400.00	0.00	661,400.00		661,400.00	8,598,200.00
13	Թափուր	Դատավոր	1.00	0	0	66,140.00	10.00	661,400.00	0.00	661,400.00		661,400.00	8,598,200.00
14	Թափուր	Դատավոր	1.00	0	0	66,140.00	10.00	661,400.00	0.00	661,400.00		661,400.00	8,598,200.00
15	Թափուր	Դատավոր	1.00	0	0	66,140.00	10.00	661,400.00	0.00	661,400.00		661,400.00	8,598,200.00
Ընդամենը			4.00	0.00	0.00	264,560.00	40.00	2,645,600.00	0.00	2,645,600.00	0.00	2,645,600.00	34,392,800.00

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՎ ԴԱՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՊԱՐԳԵՎԱՏՐՄԱՆ ՖՈՆԴ 4112, 4113

ՍՏՈՐԱԲԱԺԱՆՄԱՆ ԱՆՎԱՆՈՒՄ	2021թ. /հիմնական ֆ լրացուցիչ աշխատավարձի ֆոնդ/	2021 թ. /01.06.21-31.12.21/ /4113/	2021 թ. /01.06.21-31.12.21/ /4112/
Վերաքննիչ դատարան	126,853,874.4	4,173,169	33,882,993
Սնանկության դատարան	60,931,462.4	2,653,866	15,625,572
ԸՆԴԱՄԵՆԸ ԴԱՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՊԱՐԳԵՎԱՏՐՄԱՆ ՖՈՆԴ /ԴՐԱՄ/		6,827,036	49,508,565